



**Կարգապահական գործ թիվ 20005**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2020թ-ի սեպտեմբերի 22-ի թիվ 103 նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ԹԻՎ ԿԳ/78-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՀԱՅՎ ԱԼՈՒՄՅԱՆԻ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՒԴՈՅԱՆԻ ԵՎ ՄԻՀՐԱՆ  
ՊՈՂՈՍՅԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Հրանտ Անանյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի Կարեն Սարգսյանի և Արմեն Ֆերոյանի կազմով, քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի, քննության առնելով փաստաբաններ Հայկ Ալումյանի (արտոնագիր՝ թիվ 284), Հովհաննես Խուրդյանի (արտոնագիր՝ թիվ 2040) և Միհրան Պողոսյանի (արտոնագիր՝ թիվ 1112) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

**Պ Ա Ր Ձ Ե Ց՝**

**1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Բարձրագույն դատական խորհուրդը (**այսուհետ՝ նաև ԲԴԽ**), ի դեմս նախագահ Ռուբեն Վարդազարյանի (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործով 17.03.2020թ., ժամը 13:00-ին հրավիրվել է դատական նիստ: Դատական նիստը դատավոր Աննա Դանիբեկյանի վատառողջ լինելու պատճառով չի կայացել, որի մասին դատարանի աշխատակազմը նախապես դատավարության մասնակիցներին, այդ թվում՝ ամբաստանյալների պաշտպաններին տեղեկացրել է հեռախոսազանգի միջոցով:

Այդուհանդերձ, թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործով ամբաստանյալների պաշտպաններ Հայկ Ալումյանը (**այսուհետ՝ նաև Պատասխանող**) Արամ Վարդևանյանը, Միհրան Պողոսյանը (**այսուհետ՝ նաև Պատասխանող կամ Փաստաբան**) և Հովհաննես Խուրդյանը (**այսուհետ՝ նաև Պատասխանող կամ Փաստաբան**) 17.03.2020թ. ժամը 13:00-ի սահմաններում ներկայացել են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայր և մուտք են գործել թիվ 1 դատական նիստերի դահլիճ:

Դատական նիստերի դահլիճում գտնվելու ընթացքում ամբաստանյալների պաշտպանների կողմից դրսևորվել է անհարգալից վերաբերմունք դատարանի և դատավարության մյուս մասնակիցների հանդեպ: Մասնավորապես, պաշտպան Միհրան Պողոսյանը նստել է նախագահող դատավորի համար նախատեսված սեղանի դիմաց և դատական կարգադրիչների պահանջներից

հետո միայն դադարեցրել իր գործողությունները, պաշտպան Հովհաննես Խուդոյանը նստել է մեղադրանքի կողմի համար նախատեսված հատվածում (այն սեղանի շուրջ, որտեղ տվյալ գործով դատական նիստերին մասնակցում են մեղադրողները), Հայկ Ալումյանը, սեղանին հարվածելով, աղմուկ է բարձրացրել: Գտնվելով դատական նիստերի դահլիճում, վերջիններս ծաղրական վերաբերմունք են դրսևորել դատական իշխանության նկատմամբ, կազմակերպել են «դատավարություն» և կատարել նմանաբնույթ անհարգալից գործողություններ:

Պաշտպանների վերոնշյալ վարքագիծը տեսաձայնագրվել է զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների կողմից:

Դիմողը նշել է, որ նկարագրված վարքագծով անհարգալից վերաբերմունք են ցուցաբերել դատարանի և դատավարության մյուս մասնակիցների նկատմամբ, որը կարող է հասարակության առջև նվազեցնել դատական իշխանության և արդարադատության հեղինակությունը:

### **Զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների համառոտ նկարագրությունը**

Պալատի մամուլի խոսնակի կողմից ներկայացվել են հետևյալ հրապարակումները՝

- Aysor.am լրատվականի հետ ունեցած հարցազրույցի ընթացքում Հայկ Ալումյանը նշել է, որ տվյալ գործի շրջանակներում հեռախոսազանգի միջոցով են տեղեկացրել, որ նիստը չի կայանալու: Մինչդեռ դրա մասին պետք է տեղեկացվեր կամ գրավոր, կամ դատարանի դահլիճում: Վերջինս նաև նշել է, որ դատավորի օգնականը կամ նիստերի քարտուղարը փորձեց Հովհաննես Խուդոյանին դուրս հրավիրել ու առանձին ասել, թե ինչ է տեղի ունենում: «Դա ձև չէ, քաղաքակիրթ ու օրինական ընթացակարգ չէ՝ բացատրություններ ներկայացնելու համար»: Նրա փոխանցմամբ, կարգադրիչներից մեկի միջոցով իրենց փոխանցել են, որևէ մեկը չի պատրաստվում գալ ու հայտնել, թե ինչ է կատարվում: Հայկ Ալումյանը նաև հավելել է. «Հավանաբար, դա իրենց պատվից ցածր համարեցին: Այն, ինչ տեղի ունեցավ, անհարգալից մոտեցում է մեր նկատմամբ, և մենք ուզեցինք ցույց տալ, որ ավելի ցայտուն ու փոխադարձ\_անհարգանք մենք կսկսենք ցույց տալ: Իրենք հասկացան դա ու բարեբախտաբար շուտ հասկացան, եկավ մի կին, ներկայացավ, որպես այս դատարանի պատասխանատու, շատ քաղաքավարի, նորմալ ձևով տեղեկացրեց, թե ինչու նիստը տեղի չի ունենալու, ինչից հետո մենք դուրս եկանք»<sup>1</sup>:

- [www.azatutyun.am](http://www.azatutyun.am) լրատվականի հետ ունեցած հարցազրույցում փաստաբան Միհրան Պողոսյանն ընդունել է դատավորի աթոռին նստելու փաստը և հավելել, որ եթե դատական նիստերի քարտուղարը գար նիստերի դահլիճ և հայտներ նիստը հետաձգելու մասին, այդ պարագայում նման բան չէր անի: Միևնույն ժամանակ Հայկ Ալումյանը պնդել է, որ դատավորի աթոռին նստելը անհարգալից վերաբերմունք չէ: Հայկ Ալումյանը պնդել է՝ պետք է տարբերակել դատարանն ու դատարանի շենքը: Ալումյանն այդ օրը, ձեռքը սեղանին խփելով՝ պահանջներ էր հնչեցրել, ինչը լսելի չէր ձայնամեկուսիչ ապակու մյուս կողմում գտնվող լրագրողներին<sup>2</sup>:

- [www.a1plus.am](http://www.a1plus.am) լրատվականի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ Հայկ Ալումյանն անդրադարձել է վերոնշյալ միջադեպին և նշել, որ Միհրան Պողոսյանի՝ դատավորի աթոռին նստելն ակցիա չէր, և եթե մի բան օրենքով արգելված չէ, ոնց կարող է ԲԴԽ նախագահի կողմից այդ գործողությունը համարվել անհարգալից<sup>3</sup>:

## **2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

<sup>1</sup> [https://www.aysor.am/am/news/2020/03/17/%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF-%D4%B1%D5%AC%D5%B8%D6%82%D5%B4%D5%B5%D5%A1%D5%B6/1672615?fbclid=IwAR32byXS\\_UCYnPPZc2t9iiV7-Ns79ez3aZjqQqDU3iLSbxTUVbUllJ2WhHmM](https://www.aysor.am/am/news/2020/03/17/%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF-%D4%B1%D5%AC%D5%B8%D6%82%D5%B4%D5%B5%D5%A1%D5%B6/1672615?fbclid=IwAR32byXS_UCYnPPZc2t9iiV7-Ns79ez3aZjqQqDU3iLSbxTUVbUllJ2WhHmM)

<sup>2</sup> <https://www.azatutyun.am/a/30499385.html>

<sup>3</sup> [https://a1plus.am/hy/article/363073?fbclid=IwAR3sB9P59StckF\\_UZaBcsr9D0qkVE4pW0IU3cv4VfPc8w3ptITuU3Sx\\_HXk](https://a1plus.am/hy/article/363073?fbclid=IwAR3sB9P59StckF_UZaBcsr9D0qkVE4pW0IU3cv4VfPc8w3ptITuU3Sx_HXk)

Պալատի նախագահի 30.03.2020թ. թիվ 62-Ա/ԿԳ-20005 որոշմամբ փաստաբաններ Հայկ Ալումյանի, Հովհաննես Խուդոյանի և Միհրան Պողոսյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019թ.-ի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ նաև Կանոնագիրք) 2.2.2 ենթակետի և 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

31.03.2020թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հունան Բաբայանին (այսուհետ՝ նաև Նախապատրաստող):

### **3. Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.**

#### **3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.**

Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

#### **3.2. Պատասխանողների համառոտ բացատրությունները.**

Օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պատասխանողներ Հայկ Ալումյանից, Հովհաննես Խուդոյանից և Միհրան Պողոսյանից դիմումի վերաբերյալ պահանջվել է գրավոր բացատրություն, սակայն Պատասխանողների կողմից բացատրություն չի ներկայացվել:

##### **3.2.1 Հայկ Ալումյանի կողմից ներկայացված բացատրությունը**

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանող Հայկ Ալումյանի կողմից ներկայացվել է բացատրություն, որում հայտնվել է հետևյալը:

Պատասխանողները հանդիսանում են թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործով ամբաստանյալի պաշտպանները: Նշված գործով հերթական դատական նիստը նշանակված է եղել 17.03.2020թ.՝ ժամը 13:00-ին, սակայն 17.03.2020թ.՝ Պատասխանողի հիշելով, ժամը 10-ի սահմաններում վերջինիս զանգահարել են նախագահող դատավոր Ա. Դանիբեկյանի աշխատակազմից՝ հայտնելով, որ դատական նիստը տեղի չի ունենալու դատավորի վատառողջ լինելու պատճառով:

Ճշտելու համար հաջորդ դատական նիստի հնարավոր ժամկետը՝ Պատասխանողները ներկայացել են դատարան և դատական նիստերի դահլիճում փորձել են նախագահող դատավորի աշխատակազմից ստանալ տեղեկատվություն դատավորի վատառողջության հիմքերի և հաջորդ դատական նիստի ժամկետի վերաբերյալ: Ժամը 13:00-ին կարգադրիչները Պատասխանողներին առաջարկել են ազատել դատական նիստերի դահլիճը, ինչին Հայկ Ալումյանը պատասխանել է, որ իրենք հրավիրված են դատարանի կողմից և պահանջել է, որպեսզի դատարանի աշխատակազմից որևէ մեկը ներկայանա դատական նիստերի դահլիճ և իրենց պաշտոնապես հայտնի, որ դատական նիստը հետաձգվում է անորոշ ժամկետով: Կարգադրիչներից մեկը հեռացել է, որպեսզի Պատասխանողի պահանջը փոխանցի դատավորի աշխատակազմին և վերադառնալով հայտնել է, որ դատավորի աշխատակազմը հրաժարվում է տրամադրել դատական նիստի հետաձգման պատճառը և մնացյալ տեղեկությունները: Միաժամանակ կարգադրիչներից մեկը Պատասխանող Հովհաննես Խուդոյանին հայտնել է, որ դատավորի օգնականն իրենց հետաքրքրող հարցերի շուրջ ցանկանում է Հովհաննես Խուդոյանի հետ առանձին խոսել դատական նիստերի դահլիճից դուրս՝ միջանցքում: Պատասխանողները և մյուս պաշտպանները հրաժարվել են այդ մեթոդով շփումներից և պահանջել են պաշտոնական պարզաբանումներ, որոնք հետագայում հնարավոր լինել ներկայացնել տարբեր առյուծներ:

Պատասխանողները և մյուս պաշտպանները 10-15 րոպե սպասել են, որպեսզի որևէիցե իրավասու անձ ներկայանա դատական նիստերի դահլիճ և պաշտոնապես հայտարարի նիստի հետաձգման պատճառը և հետաձգման ակնկալվող մոտավոր տևողությունը, սակայն, բացի կարգադրիչներից, ոչ մեկը դատական նիստերից դահլիճ չի եկել և որևէ պարզաբանում չի ներկայացրել: Կարգադրիչները ևս մեկ անգամ հայտնել են, որ որևէիցե մեկը չի պատրաստվում պաշտոնապես հայտարարել դատական նիստի հետաձգման հետ կապված հանգամանքների մասին:

Ըստ Հայկ Ալումյանի հաշվի առնելով պաշտոնական պարզաբանում ստանալու և այդ պարզաբանումը փաստաթղթավորելու (ծայնագրության կամ տեսաձայնագրության միջոցով) կարևորությունը՝ ինքը դիմել է հետևյալ մեթոդի. ձեռքի ափով մի քանի անգամ ոչ շատ ուժեղ հարվածել է պաշտպանների համար նախատեսված սեղանին՝ դրանով արտահայտելով իր դժգոհությունը և միաժամանակ փորձելով գրավել նախագահող դատավոր Ա. Դանիբեկյանի աշխատակազմի ուշադրությունը: Մի քանի անգամ այդպիսի հարվածներ հասցնելուց հետո կարգադրիչներն իրենց վերադասներին զեկուցել են ստեղծված իրավիճակի մասին, որից հետո դատական նիստերի դահլիճ է ներկայացել դատարանի աշխատակազմի աշխատակից, ով տվել է բոլոր անհրաժեշտ պարզաբանումները, ինչից անմիջապես հետո Պատասխանողները և մյուս փաստաբանները հեռացել են դատական նիստերի դահլիճից:

Հայկ Ալումյանը հայտնել է, որ ինքն ունի պարտականություն ապահովել իր պաշտպանյալի որակյալ պաշտպանությունն օրենքով չարգելված բոլոր միջոցներով, և պաշտպանի համար դա առաջնահերթ խնդիր է:

Պատասխանողը հայտնել է, որ չունեի այլ՝ ավելի մեղմ ներգործության հնարավորություն՝ ստանալու այն, ինչն ստանալու իրավունքն ինքն այդ պահին ուներ, և ինչը չափազանց կարևոր էր իր մասնագիտական պարտքը կատարելու համար:

Բացի այդ, Պատասխանողի կարծիքով, դատական նիստից դուրս ձեռքի ափով մի քանի անգամ ոչ ուժեղ փաստաբանին հատկացված սեղանին փաստաբանի հարվածելն ինքնին չի կարող կասկածի տակ դնել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը և (կամ) հարգանքը:

Պատասխանող Հայկ Ալումյանը Խորհրդի նիստին հայտնել է հետևյալը: Վերջինիս պաշտպանյալը մարտի 7-ի լույս 8-ի գիշերն ունեցել է առողջական լուրջ խնդիր և մեկուսարանից տեղափոխվել է հիվանդանոց, իսկ մարտի 16-ին հայտարարվել է կորոնավիրուսի համավարակի մասին: Պատասխանողի պաշտպանյալը նշյալ երկու հիմքով գտնվել է առավել խոցելի անձանց խմբում: Վերջին անգամ Պատասխանողի պաշտպանյալի խափանման միջոցի հարցը դատարանը քննել էր նոյեմբերի 5-ին, մինչդեռ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայից և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներից հետևում է, որ անձի խափանման միջոցի հարցը պետք է քննվի շատ կարճ ժամանակահատվածում: Նման պայմաններում Պատասխանողը և մյուս պաշտպանները միջնորդություն էին ներկայացրել դատարան որպես իրենց պաշտպանյալի խափանման միջոց Հայաստանի և Արցախի 4 նախկին վարչապետերի երաշխավորությունը կիրառելու մասին և ակնկալում էին, որ դատարանն այդ միջնորդությունը կքննի մարտի 17-ին: Սակայն մարտի 17-ին՝ ժամը 10-ին, իրենց զանգահարել է դատարանի աշխատակիցը և հայտնել, որ դատական նիստը չի կայանալու: Պատասխանողի հարցին, թե երբ է կայանալու հաջորդ դատական նիստը, աշխատակիցը պատասխանել է, որ այդ հարցին չի կարող պատասխանել, հետագայում Պատասխանողն ու մյուս պաշտպանները կծանուցվեն այդ մասին:

Հաշվի առնելով, որ դատական նիստում պիտի քննվեր իրենց պաշտպանյալի խափանման միջոցի հարցը, ինչպես նաև պաշտպանյալի ծանր առողջական վիճակն ու հիվանդանոցում

գտնվելու հանգամանքը՝ Պատասխանողն ու մյուս պաշտպանները դատական նիստի ժամին գնացել են դատարան՝ այնտեղից պաշտոնական տեղեկատվություն ստանալու համար, սակայն պաշտոնական որևէ տեղեկատվություն չեն ստացել: Փոխարենը՝ դատական կարգադրիչներից մեկն իրենցից պահանջել է դուրս գալ դատական նիստերի դահլիճից, իսկ մեկ ուրիշ դատական կարգադրիչ Պատասխանող Հովհաննես Խուրդյանին հայտնել է, որ դատավորի օգնականը ցանկանում է իրեն միջանցքում ինչ-որ բան հայտնել:

Քանի որ Պատասխանողին և մյուս պաշտպաններին հարկավոր էր պաշտոնական տեղեկատվություն՝ փաստաթղթի տեսքով կամ բանավոր՝ դատական նիստը հետաձգելու պատճառների, հիմքերի և ժամկետների մասին, որպեսզի հնարավոր լինել դրանք փաստաթղթային կամ տեսագրության ձևով կցել Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացվելիք՝ միջանկյալ միջոց կիրառելու դիմումին, Պատասխանողները մնացել են դատական նիստերի դահլիճում այնքան ժամանակ, մինչև չստանան պաշտոնական ծանուցում նշյալ հանգամանքների վերաբերյալ:

Տեսնելով, որ որևէ մեկը չի գալիս և իրենց որևէ տեղեկատվություն չի տրամադրում, իսկ դատական կարգադրիչները փորձում են իրենց դատական նիստերի դահլիճից հանել, Պատասխանողը մի քանի անգամ ոչ շատ ուժեղ հարվածել է սեղանին և ասել, որ դատարանի աշխատակիցներից գան և իրենց պաշտոնապես հայտնեն դատական նիստի հետաձգման պատճառների մասին: Դրանից հետո դատարանի մի աշխատակից եկել է և իրենց հայտնել, որ դատական նիստն անորոշ ժամկետով հետաձգվել է: Սրանից Պատասխանողը եզրակացրել է, որ եթե այդուհանդերձ դատարանից իրենց պաշտոնապես հայտնել են դատական նիստի հետաձգման և դրա ժամկետի մասին, ուրեմն՝ իրենք այդ տեղեկատվությունն ստանալու իրավունք են ունեցել, իսկ նախքան իր կողմից դատական նիստերի դահլիճում սեղանին հարվածելն իրենց հայտնել են, որ որևէ տեղեկատվություն տրամադրել չեն կարող:

Հայկ Ալումյանը հայտնել է, որ դրանից հետո ինքը գրավոր դիմել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահին և հիմք ընդունելով դատարանի աշխատակցի կողմից դատական նիստն անորոշ ժամկետով հետաձգելու մասին իրենց ծանուցելու հանգամանքը, ինչպես նաև ՀՀ բարձրագույն դատական խորհրդի համապատասխան որոշման իրավակարգավորումներն առ այն, որ միջնորդության անհետաձգելիության և դատավորի կողմից այն քննելու անհնարինության դեպքում միջնորդության քննությունը պետք է փոխանցվի այլ դատավորի՝ խնդրել է միջնորդության քննությունը մակագրել այլ դատավորի: Երբ իրենց այս դիմումը մերժվել է, իրենք դիմել են Մարդու իրավունքների եվրոպական դատարան միջանկյալ միջոց կիրառելու դիմումով: Նշյալ երկու դիմումները չէին կարող ներկայացվել, եթե իրենք չունենային ապացույց, այն է՝ տվյալ դեպքում տեսագրություն դատական նիստը հետաձգվելու վերաբերյալ բանավոր ծանուցվելու մասին:

Պատասխանողը նաև փաստել է, որ չկա որևէ օրենսդրական կառուցակարգ, որը թույլ կտար դատարանից ստանալ իրենց հետաքրքրող հարցերի պատասխանը:

Բացի այդ, երաշխավորներից մեկը՝ Կարեն Կարապետյանը, պատրաստվում էր մեկնել Մոսկվա և Հայաստանում մնացել էր դատական նիստին մասնակցելու համար: Հետևաբար, կային հարցեր, որոնց պատասխանը ստանալը ծայրահեղ անհրաժեշտ էր, որպեսզի Պատասխանողը՝ որպես պաշտպան, պատշաճ իրականացնի իր գործառույթները և կատարի իր պաշտպանյալի պաշտպանությանն ուղղված հետագա համապատասխան քայլերը:

Ինչ վերաբերում է Պատասխանողի կողմից դատական նիստերի դահլիճում տեղադրված սեղանին հարվածելու ուժգնությանը, ապա Դիմողի կողմից չի ապացուցվել, որ հարվածները եղել են այնքան ուժեղ, որ խոչընդոտել են դատարանի բնականոն աշխատանքին, առաջացրել են անհարմարություն կամ զցել են փաստաբանի մասնագիտության վարկանիշը, իսկ երբ Պատասխանողն ինքն է փորձել ստանալ նշյալ հանգամանքները հաստատող կամ հերքող

ապացույցներ՝ մասնավորապես, գրավոր խնդրելով դատարանի նախագահին իրեն տրամադրել դատական նիստերի դահլիճում իր նշյալ գործողությունների տեսաձայնագրությունն ու ձայնագրառումը, ինքն ստացել է բացասական պատասխան:

Ըստ Պատասխանողի՝ հաջորդ դատական նիստը տեղի է ունեցել մայիսի 8-ին:

Պատասխանողը նաև նշել է, որ ինքը չգիտի ավելի մեղմ միջոց, քան իր կիրառած միջոցը՝ դատական նիստը հետաձգելու և հետաձգման ժամկետի վերաբերյալ պաշտոնական ծանուցում ստանալու համար:

Պատասխանողը ներկայացրել է նաև իր վերոնշյալ պնդումները հավաստող ապացույցները:

### **3.2.2. Միհրան Պողոսյանի բացատրությունը**

Պատասխանող Միհրան Պողոսյանի ներկայացուցիչ Արամ Վարդևանյանը Խորհրդի նիստում հայտնել է, որ դատավոր Աննա Դանիբեկյանը պարբերաբար ձգձգում է միջնորդությունների քննությունը: Հակիրճ վերահաստատելով Պատասխանող Հայկ Ալումյանի պնդումները՝ Արամ Վարդևանյանը հայտնել է, որ տեսանյութից երևում է, որ Պատասխանող Միհրան Պողոսյանը, նստած լինելով դատավորի աթոռին, իրեն մոտեցած դատական կարգադրիչի պահանջից հետո վեր է կացել դատավորի աթոռից: Ընդ որում, դատական կարգադրիչը Միհրան Պողոսյանին նման պահանջ է ներկայացրել, երբ դատական նիստերի դահլիճ են եկել լրագրողները, իսկ նախքան նրանց գալը դատական կարգադրիչները Միհրան Պողոսյանի՝ դատավորի աթոռին նստելու մեջ խնդիր չեն տեսել: Արամ Վարդևանյանի պնդմամբ բազմաթիվ են դեպքերը, անգամ կան «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում տեղադրված լուսանկարներ, երբ դատական կարգադրիչները նստում են դատավորի աթոռին և լուսանկարվում են: Ավելին՝ օրինակ՝ ՀՀ սահմանադրական դատարանում փաստաբանները և այլ անձինք նստել են Սահմանադրական դատարանի անդամների, իսկ ներկայում Սահմանադրական դատարանի դատավորների աթոռին: Նույնը վերաբերում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանին:

Բացի այդ, տվյալ պարագայում Դիմողի պնդումը, որ դատավորի աթոռին նստելով՝ Միհրան Պողոսյանն անհարգալից վերաբերմունք է ցուցաբերել դատարանի նկատմամբ, ըստ Միհրան Պողոսյանի ներկայացուցչի, խնդրահարույց է, քանի որ տվյալ պարագայում դատական նիստ չէր անցկացվում: Նույն հիմքով ներկայացուցիչը վիճարկել է նաև Դիմողի այն պնդումը, որ Միհրան Պողոսյանի նշյալ վարքագիծը նսեմացրել է փաստաբանի մասնագիտության հեղինակությունը:

Ըստ Արամ Վարդևանյանի Միհրան Պողոսյանը չի ունեցել դիտավորություն անհարգալից վերաբերմունք ցուցաբերել դատարանի նկատմամբ, ինչը երևում է նաև Միհրան Պողոսյանի գործողության ժամանակ առկա պայմաններից, այն է՝ որ դատական նիստ չէր անցկացվում:

Միհրան Պողոսյանի ներկայացուցիչը հայտնել է նաև, որ հիմնազուրկ է Դիմողի այն պնդումը, որ Պատասխանողները ծաղրական վերաբերմունք են դրսևորել դատարանի նկատմամբ և դատավարությանը նմանակող գործողություններ են կատարել: Ըստ նրա Պատասխանողները եղել են զայրացած վիճակում, այլ ոչ թե հակված են եղել իրականացնել դատարանի նկատմամբ ծաղրական գործողություններ:

Պատասխանող Միհրան Պողոսյանը վերահաստատել է իր ներկայացուցչի պնդումները՝ նշելով, որ քանի որ դատական նիստ չկար, ինքը դրսևորել է անկաշկանդ վարքագիծ և ունեցել է տպավորություն, որ առկա չէ դատական ֆորմալ գործընթաց: Եթե չկար դատական նիստ, ուրեմն՝ այդ ժամանակ չէր գործում նաև դատավարական կարգ, որին ինքը պետք է ենթարկվեր:

### **3.2.3. Հովհաննես Խուդոյանի բացատրությունը**

Պատասխանող Հովհաննես Խուդոյանը Խորհրդի նիստին հայտնել է հետևյալը:

Վերահաստատելով մյուս Պատասխանողների՝ Խորհրդի նիստում հայտնած դիրքորոշումները՝ Հովհաննես Խուրդյանը հայտնել է նաև, որ խնդրո առարկա դատական նիստում պատրաստվում էր ներկայացնել իր պաշտպանյալին ազատությունից զրկելու հետ չկապված որևէ այլ խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն: Հետևաբար, իր և մյուս Պատասխանողների շահագրգռությունը ներկայանալ դատական նիստին եղել է ավելի քան հիմնավոր: Հովհաննես Խուրդյանը նշել է, որ դատարանի աշխատակազմից իրենց հայտնել են, որ նախագահող դատավորը գտնվում է ժամանակավոր անաշխատունակության վիճակում, մինչդեռ դրանից հետո ինքը համապատասխան գրագրությամբ պարզել է, որ նախագահող դատավորը ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվել է դեռևս մարտի 13-ից, այսինքն՝ այն օրվա դրությամբ, երբ իրեն և մյուս Պատասխանողներին հայտնվել է, որ դատական նիստը տեղի է ունենալու:

Ըստ Պատասխանող Հովհաննես Խուրդյանի՝ ինքը և մյուս Պատասխանողները չեն ստացել հիմնավորում, որ նախագահող դատավորի ժամանակավոր անաշխատունակության հիմք հանդիսացող վիրահատությունը եղել է անհետաձգելի, որպիսի պայմաններում, ըստ Պատասխանողի, դատական նիստի հետաձգումն այդ հիմքով անհիմն է:

Հովհաննես Խուրդյանի պնդմամբ՝ դատական կարգադրիչների խոսակցությունից ինքը հասկացել է, որ նախագահող դատավորի աշխատակազմի ներկայացուցչին դատավորը չի թույլատրում գալ դատական նիստերի դահլիճ և հանդիպել Պատասխանողին, ինչն անհարգալից վերաբերմունք է փաստաբանների նկատմամբ:

Անդրադառնալով Դիմողի այն պնդմանը, որ նստելով դատախազի համար նախատեսված տեղում՝ Պատասխանող Հովհաննես Խուրդյանն անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատավարության մասնակիցների նկատմամբ՝ Հովհաննես Խուրդյանը գտել է, որ դատական նիստերի դահլիճում դատավարության մասնակիցների տեղաբաշխումը պայմանական է, և փաստաբանի կողմից մեղադրող դատախազի տեղը նստելը չի կարող որակվել որպես դատավարության մասնակցի նկատմամբ անհարգալից վերաբերմունք:

Հովհաննես Խուրդյանի պնդմամբ իր կողմից դատախազի տեղում նստելը չի համընկել Միհրան Պողոսյանի կողմից դատավորի տեղում նստելու հետ:

### **3.3. Վկաների ցուցմունքները.**

Սույն գործով վկաներ չեն ներգրավվել:

### **4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.**

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 30.05.2020թ.-ին կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Պալատի խորհրդին է հանձնվել 05.06.2020թ.:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 21.07.2020թ. ժամը 18:30-ին և 22.09.2020թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

### **5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *խորհուրդը հիմք է ընդունում*

Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գրանվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

**Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը:**

1) Պատասխանողներ Հայկ Ալումյանը, Հովհաննես Խուդոյանը Միհրան Պողոսյանը թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործով հանդիսանում են ամբաստանյալի պաշտպանները: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, Պատրասխանող Հայկ Ալումյանի բացատրությամբ, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներով, Պատրասխանողների բացատրություններով:*

2) Թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործով դատական նիստ է նշանակվել 17.03.2020թ.՝ ժամը 13:00-ին, որը չի կայացել: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, Պատրասխանող Հայկ Ալումյանի բացատրությամբ, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներով, Պատրասխանողների բացատրություններով:*

3) Նիստի ժամին Պատասխանողները ներկայացել են դատարան և իրականացրել են հետևյալ գործողությունները՝

- Պատասխանող Հայկ Ալումյանը մի քանի անգամ ձեռքով հարվածել է փաստաբանների համար նախատեսված սեղանին՝ աղմուկ ստեղծելով,

- Պատասխանող Հովհաննես Խուդոյանը նստել է մեղադրողների համար նախատեսված տեղում,

- Պատասխանող Միհրան Պողոսյանը նստել է նախագահող դատավորի տեղում և դատական կարգադրիչների պահանջներից հետո դադարեցրել է իր գործողությունները, ապա մոտեցել է վկաների և փորձագետների համար նախատեսված ամբիոնին:

*Նշված փաստերը հաստատվում է Դիմողի դիմումով, զանգվածային լրատվության միջոցների հրապարակած տեսագրությամբ, Պատրասխանողների բացատրություններով:*

4) Փաստաբանները ցանկացել են ստանալ տեղեկություններ հետաձգված դատական նիստի պատճառների, ինչպես նաև հաջորդ դատական նիստի օրվա և ժամի մասին: *Նշված փաստը հաստատվում է զանգվածային լրատվության միջոցների հրապարակած տեսագրությամբ, Պատրասխանողների բացատրություններով:*

#### **6. Պատասխանողների անձը բնութագրող հանգամանքները.**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Հայկ Ալումյանը փաստաբան է հանդիսանում 06.09.1996թ., և 2017-2020թթ. վերջինիս նկատմամբ հարուցվել է 5 կարգապահական վարույթ (չհաշված սույն կարգապահական վարույթը), որոնք կարճվել են:

Հովհաննես Խուդոյանը փաստաբան է հանդիսանում 28.11.2015թ., և վերջինիս նկատմամբ 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (չհաշված սույն կարգապահական վարույթը), որը կարճվել է:

Միհրան Պողոսյանը փաստաբան է հանդիսանում 22.03.2011թ., և 2017-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական վարույթը):

#### **7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**



**Խորհուրդը գտնում է, որ Պալատի նախագահի կողմից 30.03.2020թ. թիվ 62-Ա/ԿԳ-20005 որոշմամբ փաստաբաններ Հայկ Ալումյանի, Հովհաննես Խուդոյանի և Միհրան Պողոսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պարճառաբանությամբ.**

**Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:**

**Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:**

Կանոնագրքի նշված իրավադրույթի խախտման փաստը պարզելու համար Խորհուրդն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցադրումներին՝

- **արդյոք փաստաբանները օգտվելով իրենց արտահայտվելու իրավունքից, կասկածի տակ են դրել կամ խաթարել են փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:**

- **արդյոք իրենց վարքագծով փաստաբանները նպատակ են հետապնդել անհարգալից վերաբերմունք դրսևորել դատական իշխանության նկատմամբ:**

Այսպես՝ **Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների համաձայն՝ փաստաբաններն իրենց հատուկ կարգավիճակով պայմանավորված՝ որպես միջնորդ, կենտրոնական դիրք են զբաղեցնում հանրության և դատարանների միջև արդարադատության իրականացման գործընթացում: Նման կարգավիճակով է բացատրվում նրանց վարքագծի նկատմամբ սովորաբար կիրառվող սահմանափակումները որպես փաստաբանական միության անդամ<sup>4</sup>:**

**Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 16 (2013) կարծիքի 25-րդ կետի համաձայն՝ ... պրոֆեսիոնալ գործընկերների նկատմամբ հարգանքի, օրենքի գերակայության և արդարադատության արդար իրականացման հարգանքի՝ Փաստաբանների և իրավաբանների միությունների եվրոպական խորհրդի «Եվրոպայում իրավաբանի մասնագիտության հիմնարար սկզբունքների մասին» խարտիայում սահմանված սկզբունքներով պահանջվում է խուսափել գործընկերների, առանձին դատավորների և դատարանի ընթացակարգերի ու որոշումների վիրավորական քննադատությունից:**

**Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (այսուհետ՝ նաև CCBE) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ կոմենտարների «դ» կետի համաձայն՝ փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի**

<sup>4</sup> St' u Casado Coca v. Spain գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, 24.02.1994թ. վճիռը (§ 54):

նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը<sup>5</sup>:

**Փաստաբանների արտահայտվելու ազատության վարքագծի սահմանափակումները ինչպես արդեն նշվել է հետապնդում են իրավաչափ նպատակ՝ բարձր պահել փաստաբանության ինստիտուտի հեղինակությունը:**

Տվյալ դեպքում փաստաբաններն ընտրել են արտահայտվելու ինքնատիպ ձև, որը չի զուգորդվել անհարգալից կամ ոչ կոռեկտ արտահայտությունների օգտագործմամբ որևէ մեկի, այդ թվում նաև դատական իշխանության նկատմամբ, ուստի գնահատման է արժանի նրանցից յուրաքանչյուրի դրսևորած վարքագիծը թե որպես արտահայտման ձև, թե որպես հետապնդվող նպատակին հասնելու միջոց:

Փաստաբաններն իրենց բացատրություններով պարզաբանել են, որ դիմել են արտահայտվելու նման աղմկահարույց եղանակի, քանի որ դատարանի աշխատակազմից իրենց տեղեկացրել են դատական նիստը հետաձգելու մասին, սակայն չեն տեղեկացրել, թե երբ է կայանալու հերթական հաջորդ նիստը: Իր բացատրությամբ Հայկ Ալումյանը նշել է, որ դատական նիստում պետք է քննվեր իրենց պաշտպանյալի խափանման միջոցի հարցը, իսկ որևէ պաշտոնական տեղեկություն նիստի հետաձգման պատճառի և հաջորդ նիստի մասին իրենց չի ներկայացվել: Պաշտպաններին հարկավոր էր պաշտոնական տեղկատվություն՝ փաստաթղթի տեսքով կամ բանավոր՝ դատական նիստը հետաձգելու պատճառների, հիմքերի և ժամկետների մասին, որպեսզի հնարավոր լինել դրանք փաստաթղթային կամ տեսագրության ձևով կցել Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացվելիք՝ միջանկյալ միջոց կիրառելու դիմումին:

Հայկ Ալումյանն ընդունել է, որ մի քանի անգամ ոչ շատ ուժեղ հարվածել է սեղանին և ասել, որ դատարանի աշխատակիցներից գան և իրենց պաշտոնապես հայտնեն դատական նիստի հետաձգման պատճառների մասին և միայն դրանից հետո են դատարանից իրենց պաշտոնապես հայտնել դատական նստի հետաձգման և դրա ժամկետի մասին: Հայկ Ալումյանը եզրահանգել է, որ, իրենք այդ տեղեկատվությունն ստանալու իրավունք են ունեցել, իսկ նախքան իր կողմից դատական նիստերի դադարեցում սեղանին հարվածելն իրենց հայտնել են, որ որևէ տեղեկատվություն տրամադրել չեն կարող:

Վերը նշվածից բխում է, որ փաստաբանների կողմից արտահայտման նշված ձևի ընտրությունը հետապնդել է ոչ թե դատական համակարգին վիրավորելու կամ վարկաբեկելու, այլ տեղեկություն ստանալու և դրանով իսկ՝ իրենց պաշտպանյալի իրավունքները լավագույնս պաշտպանելու իրավաչափ նպատակ:

Ըստ փաստաբան Միհրան Պողոսյանը, նա իհարկե նստել է դատավորի համար նախատեսված աթոռին, ինչը նույնպես դատարանին վիրավորելու նպատակ չի հետապնդել և դատական կարգադրիչների պահանջից հետո նա վեր է կացել դատավորի աթոռից:

Հովհաննես Խուրոյանը, անդրադառնալով դատախազի տեղը նստելու իր վարքագծին, հայտնել է, որ դատավարության մասնակիցների տեղաբաշխումը պայմանական է, և փաստաբանի կողմից մեղադրող դատախազի տեղը նստելը չի կարող որակվել որպես դատավարության մասնակցի նկատմամբ անհարգալից վերաբերմունք:

Վերոգրյալի հաշվառմամբ, պատասխանելով այն հարցին, թե **արդյոք փաստաբանները օգտվելով իրենց արտահայտվելու իրավունքից, կասկածի տակ են դրել կամ խաթարել են փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը, գտնում է, որ ոչ հետևյալ պատճառաբանությամբ՝**

<sup>5</sup> Տե՛ս CCBE A Commentary on the Charter of Core Principles of the European Legal Profession

Փաստաբաններից որևէ մեկը չի օգտագործել անհարգալից կամ ոչ կոռեկտ բառապաշար և իրենց վարքագիծը հստակ ուղղված է դատական նիստի հետաձգման վերաբերյալ տեղեկություններ ստանալուն, ինչը ստանալու այլ եղանակները իրենց կարծիքով ողջամտորեն սպառված են եղել, քանի որ դատարանի աշխատակազմից որևէ մեկը չի ներկայացել դատական նիստերի դահլիճ և չի պատասխանել փաստաբանների հարցերին: Ավելին՝ դատարանի համար սահմանված աթոռին նստելը ինքնին չի կարող համարվել անհարգալից վերաբերմունք դատավորի նկատմամբ, եթե նման միտում փաստաբանը չի հետապնդում իր այդ վարքագծով: Ակնհայտ է, որ դատարանի կարգադրիչների պահանջով փաստաբանը ազատել է դատավորի աթոռը, իսկ հետագայում էլ պնդել է, որ նման նպատակ չի հետապնդել:

Ինչ վերաբերում է դատախազի համար նախատեսված աթոռը զբաղեցնելու վարքագծին, ապա կողմերի համար սահմանված սեղանների բաժանումը պայմանական է և որևէ կերպ փաստաթղթավորված չէ, թե որ կողմը որ սեղանի շուրջ պետք է իր տեղը զբաղեցնի:

Փաստաբան Հայկ Ալումյանի վարքագիծը նույնպես չի հանդիսանում Կանոնագրքի 2.2.2 կետի խախտում, քանի որ հետապնդել է ուշադրություն գրավելու նպատակ, առանց որի նրա կարծիքով տվյալ հանգամանքներում հնարավոր չէր ապահովել իր վստահորդի շահերի լիարժեք պաշտպանությունը:

Պատասխանելով այն հարցին, թե արդյոք իրենց վարքագծով փաստաբանները նպատակ են հետապնդել անհարգալից վերաբերմունք դրսևորել դատական իշխանության նկատմամբ, Խորհուրդն արձանագրում է, որ ոչ:

Գործի նյութերով հաստատվում է, որ փաստաբանների վարքագիծը հետապնդել է մեկ նպատակ՝ ստանալ պատշաճ ձևով ձևակերպված տեղեկատվություն դատական նիստի հետաձգման պատճառների և հաջորդ դատական նիստի օրվա և ժամի մասին, ինչն անհրաժեշտ էր իրենց վստահորդի շահերը լավագույնս ներկայացնելու համար:

Խորհուրդն արձանագրում է, որ Կանոնագրքի 2.2.2 կետով սահմանված կանոնի շրջանակներում փաստաբանների վարքագիծը քննարկելիս կարևոր է անդրադառնալ ոչ միայն բուն վարքագծի դրսևորմանը, այլ նաև այն արտաքին գործոններին, որոնք ազդել են համապատասխան վարքագծի վրա, ինչպես նաև գհահատման առարկա դարձնել փաստաբանների վարքագծով հետապնդվող նպատակը:

## **7.2 Կանոնագրքի 4.1 կետի խախտման մասով**

**Կանոնագրքի 4.1 ենթակետի համաձայն՝** *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Կանոնագրքի 4.1 կետից հետևում է, որ, որ Կանոնագրքի նշյալ կետի խախտման համար մեղավոր ճանաչվելու համար ենթադրյալ իրավախախտումը պետք է տեղի ունենա դատական

նիստի ժամանակ կամ դատավարական օրենսգրքին համապատասխան՝ դատավարական գործողություն կատարելիս, քանի որ այդ դեպքում է, որ փաստաբանի վրա տարածվում է Կանոնագրքի 4.1 կետով փաստաբանին վերագրվող դատավարական կանոններին ենթարկվելու պարտականությունը: Հակառակ պարագայում անգամ դատարանի շենքում փաստաբանի կողմից Օրենքի և Կանոնագրքի խախտումը չի կարող որակվել Կանոնագրքի 4.1 կետով:

Տվյալ պարագայում փաստաբանների վարքագիծը թեև դրսևորվել է դատարանի դահլիճում, սակայն այդ պահին չի եղել դատական նիստ, չեն կատարվել դատավարական գործողություններ և փաստաբանները հանդես չեն եկել դատարանի առջև: Հետևաբար, Կանոնագրքի 4.1 կետը Պատասխանողների նկատմամբ կիրառելի չէ:

Վերոշարադրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողները չեն խախտել Կանոնագրքի 4.1 կետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ հոդվածի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, Պալատի կանոնադրության 16.26-րդ կետի և Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 6.1.1 (2) ենթակետի պահանջներով՝ Խորհուրդը

### **Ո Ր Ո Շ Ե Ց՝**

**1. Պալատի նախագահի կողմից 30.03.2020թ. թիվ 62-Ա/ԿԳ-20005 որոշմամբ փաստաբաններ Հայկ Ալումյանի (արտոնագիր՝ թիվ 284), Հովհաննես Խուրոյանի (արտոնագիր՝ թիվ 2040) և Միհրան Պողոսյանի (արտոնագիր՝ թիվ 1112) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:**

**2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:**

**Ծանոթություն.** Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

**ՀՀ փաստաբանների պալատի  
խորհրդի նիստը նախագահող՝**

**Հրանտ Անանյան**

**22 սեպտեմբերի 2020թ.  
թիվ ԿԳ/78-Ա  
ք. Երևան**